Կին և քաղաքականությունը

Անվճար հավելված

2013 մարտ

www.WomenNet.am

Ինչպե՞ս են քվեարկել կին ընտրողները անցած նախագահական ընտրություններում. այս հարցի պատասխանը դժվար է ստանալ...

էջ 4

«Պեկք չէ՞ կնոջ ուսերին այդքան մեծ պատասխանատվություն բարձել...»

Այս ուշագրավ հարցադրմամբ են մեզանում, որպես կանոն, անցնում նախագահական ընտրությունները, այդ նույն սկզբունքով է մեկնարկել այսօր մայրաքաղաքի ավագանու ընտրարշավը: Այնպես որ, «Երևանի քաղաքապետի պաշտոնում երբևէ կին կտեսնե՞նք» հարցը բարձրաձայնելուց առաջ չէր խանգարի պատասխաններ գտնել նույնքան արդիական մեկ այլ խնդրի առնչությամբ, այն է՝ ինչո՞ւ Հայաստանում մինչ օրս չի եղել նախագահի կին թեկնածու:

Գուցե այս խնդիրը հետընտրական իրադարձությունների ֆոնին էական չթվա, սակայն այն արժի բացահայտել հենց այսօր, թեկուզ նրա համար, որ կանայք հինգ տարի անց կրկին չհայտնվեն «կոտրած տաշտակի առաջ»: Ի վերջո, վիրավորական է, որ մեր հասարակության մեջ տղամարդկանցից ոչ պակաս ինտելեկտուալ ներուժ ունեցող կանայք ավելի քան քսան տարվա ընթացքում չեն կարողանում լուծել երկրի թիվ մեկ պաշտոնում իրենց առաջադրման հարցը:

Այս ընթացքում նույնիսկ ծանրաշարժ թվացող հասարակական կարծիքը հասցրեց ավելի լոյալ դառնալ երկրի ղեկավարի պաշտոնին կին տեսնելու հնարավորության նկատմամբ, սակայն այդ հեռանկարն իրացնելու ունակ թեկնածուներ այդպես էլ ի հայտ չեկան: Որոշակի առաջընթաց իհարկե նկատվել է, սակայն այն մնացել է առաջադրվելու մտադրության մասին հայտարարությունների մակարդակում: 2013-ի նախագահական ընտրություններում այդ մասին հրապարակավ հայտնած երկու կանանցից ընտրարշավին մասնակցելու փորձ կատարեց միայն մեկը, այն էլ՝ անհաջող: Հիշեցնենք, որ «Ազատ դեմոկրատներ» կուսակցության փոխնախագահ Անուշ Սեդրակյանն այդպես էլ իր թեկնածությունը չառաջադրեց, թեև կուսակցությունում այս տարբերակը բավական ակտիվ էր քննարկվում: Այսօր, փորձելով բացատրել իր մտադրությունից հետ կանգնելու պատճառները, նա ասում է, որ «ներկա ուժերի բաշխումով բացառվեց լուրջ գաղափարական պայքարը», և ինքը չէր ցանկանա, որ առաջադրվելու դեպքում «իրեն ընտրեին կին լինելու համար, քանի որ դա ոչ թե իր արժանիքն է, այլ պարզապես բնության պատահականություն»:

Փոքր-ինչ հեռուն գնաց Մամուլի ազգային ակումբի ղեկավար Նարինե Մկրտչյանը, որը հայտարարեց, որ գալիս է որպես մտավորականության թեկնածու և իր առաքելությունը տեսնում է «հասարակության հուսահատությունը հաղթահարելու» մեջ: Նա ներկայացրեց իր փաստաթղթերը ԿԸՀ, սակայն այդպես էլ չկարողացավ հայթայթել նախընտրական գրավի համար անհրաժեշտ գումարը: Կարելի է համաձայնել նրա այն դիրքորոշմանը, որ ընտրագրավի չափը յուրօրինակ գույքային ցենզ է, որը սահմանափակում է ընտրական իրավունքի իրացման հնարավորությունը: Սակայն այդ նույն հանգամանքը ամենևին չի խանգարում տղամարդկանց, այդ թվում նաև՝ ոչ ունևոր և հանրությանը քիչ հայտնի, գրավի հարցն ինչ-որ կերպ լուծել: Բնականաբար, խոսքն այն մասին չէ, որ նրանց պատկերով և նմանությամբ քաղաքական ասպարեզում հայտնվեն կանայք, ում առնչությամբ հասարակությունը տանջվի հռետորական հարցով՝ որտեղի՞ց է նա վերցրել անհրաժեշտ գումարը:

Այս իմաստով Նարինե Մկրտչյանի թեկուզև անհաջող փորձը՝ վիճարկելու ընտրագրավի սահմանադրականությունը, հնարավոր է ի վերջո հանգեցնի նրան, որ Ընտրական օրենսգրքի այս դրույթը վերանայվի, միայն թե դժվար այս հանգամանքը վերացնի կանանց առաջադրվելու ճանապարհին ծագող խոչընդոտները: Չէ՞ որ իրականում խնդիրը միայն գումարի չափը չէ: Ասենք, խորհրդարանական կամ մայրաքաղաքի ավագանու ընտրություններում առանձին թեկնածուների համար ընտրագրավ ըստ էության չկա, սակայն կանայք չեն գլխավորում կուսակցությունների կողմից ներկայացվող ցուցակները: Գուցե կուսակցությունները համարում են, որ նրանք դեռ արժանի չե՞ն... Թեև սոցիոլոգ Ահարոն Ադիբեկյանը, օրինակ, կարծում է, որ կինը հիմա էլ կարող է քաղաքապետ դառնալ: Կնշանակի՝ կուսակցությունները ուղղակի չե՞ն ուզում տեսնել այդ պաշտոնին կանանց:

Այս անգամվա նախագահական ընտրարշավն ուներ իր առանձնահատկությունները ոչ միայն այն իմաստով, որ Նարինե Մկրտչյանի մասնակցությունը կարող է համարձակություն հաղորդել և ճանապարհ հարթել մյուս կանանց համար, ովքեր կգան վաղը: Ինքնին դրական էր կանանց առաջադրվելու մասին ընդգծված քննարկումը: Ընտրարշավի ընթացքում առաջ քաշվեցին նաև քաղաքականության մեջ և բանակում կանանց մասնակցության հարցերը, ընդ որում՝ առաջին դեպքում՝ բացասական երանգավորմամբ, իսկ երկրորդում՝ դրական:

Այսպես, իրեն էպոսագետ ներկայացնող նախագահի սկանդալային թեկնածու Վարդան Սեդրակյանը որոշեց վերջակետ դնել կանանց քաղաքական մասնակցության հարցում՝ հայտարարելով, որ «կանանց տեղը քաղաքականությունը չէ», և որ ինքը չի տեսնում իր կնոջը ո՛չ քաղաքականության մեջ, ո՛չ էլ ծանրամարտի աշխարհի առաջնությունում: Սկսենք նրանից, որ դա նրա կնոջ որոշելիք հարցն է և ոչ բնավ նրա: Բացի այդ, որևէ մեկը նախագահի թեկնածուին իրավունք չի տվել սահմանափակել Սահմանադրությամբ ամրագրված բոլոր կանանց իրավունքները բացահայտ սեքսիստական արտահայտություններով: Համենայն դեպս, մինչ այժմ նման նախադեպ չի եղել, և երկրի գլխավոր պաշտոնին հավակնող ոչ մի թեկնածու իրեն թույլ չի տվել նման արտահայտություններ կանանց հասցեին: Եթե ասելիք չունեին, ապա գոնե լռում էին...

Ինչ վերաբերում է կանանց՝ բանակ զորակոչելու հարցին, ապա այս խնդիրն առաջին անգամ շոշափվեց: Միանգամից երեք նախագահի թեկնածու՝ Պարույր Հայրիկյանը, Ռաֆֆի Հովհաննիսյանը և Հրանտ Բագրատյանը, արտահայտվեցին հօգուտ այն բանի, որ կանանց էլ պետք է բանակ զորակոչել՝ թեկուզ և կամավորական սկզբունքով: Նրանց կարծիքով՝ դա առնվազն երկու խնդիր կարող է լուծել: Նախ՝ եթե խոսում ենք անհավասարության մասին, ապա դրանով կվերականգնենք գենդերային արդարությունը բանակում ծառայության տեսանկյունից, և երկրորդ՝ կանանց մասնակցությունը կօգնի լուծելու բանակում որոշ խնդիրներ՝ լավացնելով զինված ուժերում բարոյահոգեբանական մթնոլորտը:

Ասել, որ այս գաղափարն ընդունվեց հասարակությունում, չափազանցություն կլիներ: Համենայն դեպս, մամուլում քննադատական հոդվածների թիվն ակնհայտորեն շատ էր, քան սատարող: Իսկ ահա «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ, ընտրություններում երկրորդ տեղը զբաղեցրած Ռաֆֆի Հովհաննիսյանի այն խոստմանը, թե նախագահի հաջորդ թեկնածուն, հնարավոր է նաև՝ նախագահը կին կլինի, շատ ավելի լոյալ վերաբերվեցին... Թեև ժամանակը ցույց կտա...

Հրավիրում ենք՝ WomenNet.am

Դուք կարող եք կարդալ «Կինը և քաղաքականությունը» հավելվածի բոլոր համարները նաև համացանցում՝ www.WomenNet.am մեր կայքում:

Սպասում ենք բոլորին մեր կայքէջում, որտեղ դուք հնարավորություն կունենաք ոչ միայն ավելի մանրամասն և օպերատիվ տեղեկատվություն ստանալու, այլ նաև ձեր մեկնաբանությունները թողնելու և քննարկումների մասնակցելու:

Փաստաշար

ՄԱԿ-ում ընդունվեց պատմական փաստաթուղթ

Այս տարվա մարտին Նյու Յորքում կայացած ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 57-րդ նստաշրջանում երկարատև ու բուռն քննարկումներից հետո հաջողվեց համաձայնեցնել ամփոփիչ փաստաթուղթը, որը դատապարտում է կանանց ու աղջիկների դեմ բռնության որևէ դրսևորում և միջոցներ առաջարկում այդ երևույթը վերացնելու և կանխարգելելու ուղղությամբ:

«Այս փաստաթուղթն ընդունելով՝ կառավարությունները հստակեցնում են, որ խտրականությունն ու կանանց նկատմամբ բռնությունները տեղ չունեն 21-րդ դարում: Հետդարձ չկա»,- ասել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը: 130 երկիր, այդ թվում՝ Հայաստանը, համաձայնություն են հայտնել փաստաթղթի ընդունման վերաբերյալ:

ՄԱԿ-ի տվյալներով՝ 10 կանանցից 7-ն իրենց կյանքի ընթացքում ենթարկվում են բռնության: 125 երկրներ ունեն օրենք, որոնք պատիժ են սահմանում ընտանեկան բռնությունների համար, միաժամանակ 603 մլն կին ապրում է այնպիսի երկրներում, որտեղ ընտանեկան բռնությունը քրեական հանցագործություն չի համարվում:

Միջազգային գործարար զեկույց . «Ավելի շատ կանայք ղեկավար պաշտոններում»

Մարտին հրապարակված Գրանթ Թորնթոն ինքերնեշնլի «Միջազգային գործարար զեկույցի» տվյալների համաձայն՝ գործարար աշխարհում ղեկավար պաշտոնների 24%-ը կանայք են զբաղեցնում: Ցուցանիշը բարձրացել է նախորդ տարիների համեմատ, ընդ որում, զարգացող երկրների հաշվին: G7 երկրները գտնվում են աղյուսակի ստորին հատվածում. այնտեղ կանանց միայն 21%-ն է զբաղեցնում ղեկավար պաշտոններ: Նույն ցուցանիշը 28% է կազմում BRIC երկրներում, 32%՝ Հարավարևելյան Ասիայի և 40%՝ Բալթյան երկրներում :

Կանայք աշխարհի խորհրդարաններում

Միջխորհրդարանական միության այս տարվա մարտին ներկայացրած հերթական զեկույցի համաձայն՝ 2012-ին կանայք օրենսդիր իշխանության բարձրագույն մարմիններում զբաղեցնում էին տեղերի 20,3%-ը:

Հայաստանը Կիպրոսի հետ կիսում է 108-րդ հորիզոնականը: Իր 10,7 տոկոսով Հայաստանը հետ է մնում ոչ միայն տարածաշրջանի մյուս երկրներից, այլև ամենացածր ցուցանիշներ ունեցող արաբական (15,7%) և խաղաղօվկիանոսյան լողավազանի երկրներից (12,7%): Հարևան Թուրքիան 92-րդ տեղում է, Վրաստանը 12% ցուցանիշով՝ 103-րդ տեղում: Ադրբեջանը 85-րդ տեղում է՝ խորհրդարանի 125 անդամներից 20-ը կանայք են (16%): Հարևաններից միայն Իրանն է, որ Հայաստանին է հաջորդում՝ այստեղ խորհրդարանի 290 անդամներից միայն 9-ն են կանայք (3,1%):

Կանանց ձայնը

Մարգարիտ Եսայան.
«Իրականում կինն ավելի ուժեղ տեսակ է»

...Կարծում եմ՝ եթե հեղափոխություն լինի, և կանայք վերցնեն իշխանությունն աշխարհում, հաստատ աշխարհն ավելի լավն է լինելու, քան հիմա: Թող որևէ մեկի մտքով չանցնի, թե մենք թույլ արարածներ ենք, իրականում կինն ավելի ուժեղ տեսակ է, ավելի լիդեր է, քան շատ տղամարդիկ: Կուզենայի կանայք շատ լինեին խորհրդարանում, մեկ-երկու կին նախարար չունենայինք: Նաև համարձակվում եմ ասել՝ վատ չէր լինի, եթե Հայաստանում կին վարչապետ ունենանք, նաև՝ նախագահ: Ես չեմ բացառում, որ դա կարող է իրականություն դառնալ, քանի որ տուն պահողը, կարգի բերողը կինն է, և նա կարող է ավելի շուտ լավ կարգի բերել որևէ գերատեսչություն, քաղաք, պետություն...

Լարիսա Ալավերդյան.
«Կանայք կարող են երկրի դեմքը փոխել»

...Այն ներուժը, որն ունի հայ կինը, եթե ներդնի, ապա մեր երկրի դեմքը կփոխվի: Կանայք նաև պետք է հասկանան, որ պարտավոր են մասնակցել տարբեր ոլորտներում իրականացվող ծրագրերին, մասնակցություն ունենալ երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Ազգային ժողովում էլ կանայք ավելի ընդգրկված կլինեն: 100 տոկոս պետք չի, ես ներդաշնակության կողմնակից եմ: Հայաստանը մնում է տղամարդկային մշակույթի երկիր, բայց այս մշակույթի ներքո կանայք պետք է իրենց արժանի տեղը զբաղեցնեն. այդ ժամանակ տղամարդկանց պատիվն ավելի բարձր կլինի...

Կարինե Աճեմյան.
«Միայն ուժեղ, տղամարդ նախագահ է հարկավոր»

...Վստահ եմ, որ մոտ ապագայում Հայաստանը չի ունենա կին նախագահ, քանի որ ես այն համոզման եմ, որ կնոջ ուսերին պետք չէ այդքան մեծ պատասխանատվություն բարձել: Մեր երկիրը և՛ աշխարհագրական դիրքով, և՛ արտաքին մարտահրավերներով, որոնք մենք դժվարությամբ, բայց հաղթահարում ենք, այնպիսի երկիր է, որին միայն ուժեղ, տղամարդ նախագահ է հարկավոր: Երբեմն մեզ որպես օրինակ մատնանշում են սկանդինավյան երկրները, որտեղ կանայք պաշտպանության նախարար են կամ վարչապետ, բայց մեր երկիրը, իրականում, դեռ պատերազմի մեջ է, և մենք իրավունք չունենք այդպիսի մոտեցում ցուցաբերելու:

Կոնկրետ ինձ համար շատ կարևոր են իմ ընտանիքը, իմ կյանքն ու ազատ ժամանակը, ես ցանկանում եմ ապրել որպես կին, որպես մայր և որպես քաղաքացի: Եվ նման բեռ չէի ցանկանա կրել...

Փորձագետի անկյուն

Ինչո՞ւ այս անգամ էլ նախագահի թեկնածուների շարքում կին չկար

Նախագահական ընտրություններում կին թեկնածուի մասնակցության հարցը կորցրեց իր արդիականությունը դեռ ընտրարշավից առաջ, երբ Անուշ Սեդրակյանը հրաժարվեց առաջադրվելուց, իսկ քիչ անց Նարինե Մկրտչյանը դուրս մնաց ընտրարշավից՝ չկարողանալով մուծել ընտրագրավը: Սակայն խնդիրը թերևս շարունակում է մտահոգել փորձագետներին, որոնք, ի դեպ, իրարամերժ կարծիքներ ունեն կին նախագահ ունենալու հեռանկարի և խոչընդոտ հանդիսացող պատճառների վերաբերյալ:

«Հայ հասարակությունն ունի եվրոպական դիմագիծ»

«Մեր հասարակությունը պատրաստ է ոչ միայն կին պատգամավոր ու քաղաքապետ, այլև պաշտպանության նախարար և նախագահ ունենալու, ընդունելու և հարգելու, սակայն այսօր չկան այն կանայք, ովքեր ընկալելի կլինեն մեր հասարակությանը»,- համոզված է հոգեբան **Սամվել Խուդոյանը**՝ նկատելով, որ հայ հասարակությունն ունի եվրոպական դիմագիծ:

«Մեր ընտանիքներում հայրիշխանություն չկա՝ կա՛մ հավասարություն է, կա՛մ մայրիշխանություն, հետևաբար հայ քաղաքացին կընտրի կին նախագահ, եթե նա արժանի լինի: Այլ հարց է՝ որքանո՞վ են առաջադրվելու ցանկություն հայտնած կանայք համապատասխանում հասարակության սպասելիքներին ՀՀ նախագահի թեկնածու լինելու առումով: Կանանց ամենևին էլ պետք չէ համալրել կատակերգության ժանրին պատկանող տղամարդ թեկնածուների շարքը, որոնք ազգին, պետությանը, հասարակությանը ոչնչով օգտակար չեն եղել և առաջադրվում են ոչ թե խնդիրներ լուծելու, այլ միայն սեփական գովազդն անելու համար: Այս պարագայում սխալ է ասել՝ հասարակությունը չընտրեց, պետք չէ մեղքը բարդել հասարակության վրա, որը կընտրի անկախ սեռից, եթե տեսնի արժանավոր թեկնածուի: Մեր հասարակության ինտելեկտն ու մտածելակերպը բարձր են, ուղղակի պետք է թեկնածուն համապատասխան լինի»:

«Մեր երկրի արժեհամակարգն արևմտաեվրոպական չէ»

Քաղաքական և ընտրական գործընթացների տեխնոլոգ **Արմեն Բաղալյանի** գնահատմամբ՝ նախագահի թեկնածուի համար կարևոր է ոչ թե փաստը՝ կին է թե տղամարդ, այլ այն՝ հաղթո՞ղ է, թե՞ պարտվող: Բաղալյանի խոսքերով՝ մեր երկրի արժեհամակարգն արևմտաեվրոպական չէ:

«Մենք Եվրոպա չենք, խնդիրը միայն աշխարհագրական դիրքը չէ, այլև մտածելակերպը: Հարավային Կորեան ու Պակիստանն էլ աշխարհագրորեն Եվրոպա չեն, սակայն մտածելակերպի և արժեհամակարգի առումով նրանք շատ առաջ են: Մեզ 10-15 տարի ժամանակ կպահանջվի, որպեսզի հնարավոր լինի նախագահի ինստիտուտի ղեկին տեսնել կնոջը»:

Մեր այն հարցին, արդյոք կանանց առաջադրմամբ սառույցը չէ՞ր կոտրվի, և քայլ առաջ կգրանցվեր, Արմեն Բաղալյանը բացասական պատասխան տվեց՝ հավելելով, որ միայն թեկնածուների առաջադրմամբ հնարավոր չէ խնդրի լուծում: «Դրան զուգահեռ երկրի տնտեսական վիճակը պետք է բարելավվի, ու կրթական առումով հասարակությունն առաջընթաց գրանցի: Իհարկե կան խելացի կանայք, ովքեր կարող են առաջադրվել, սակայն այս պահին հասարակությունը դրան պատրաստ չէ»:

«Որ չասեն՝ տեսա՞ք, կին է, բա ի՞նչ էիք ուզում»

Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի նախագահ **Գևորգ Պողոսյանը** նշում է, որ ի սկզբանե կանանց առաջադրման մեջ և՛ դրական, և՛ բացասական միտումներ էր տեսնում: Նրա խոսքով՝ ակնհայտ էր, որ եթե Նարինե Մկրտչյանը կամ Անուշ Սեդրակյանը մասնակցեր, միևնույն է, էր հաղթի:

- Նրանք էլ գիտեին, որ չէին հաղթելու, սակայն նրանց առաջադրումը գուցե նպաստեր, որ հասարակության մեջ կանանց նկատմամբ վերաբերմունքը փոխվեր: Կոպիտ ասած՝ մարդկանց աչքը կսովորի տեսնել կնոջը նախագահի թեկնածուի դերում: Բայց այս առնչությամբ ես նաև մտավախություն ունեմ: Խնդիրն այն է, որ առաջադրվող կանայք պետք է լինեն շատ աչալուրջ, պատրաստված, ունենան լավ մշակված ծրագիր ու կարողանան ճիշտ ու գրագետ ընտրարշավ կազմակերպել: Տղամարդկանց պարագայում հասարակությունն անհատական է ընկալում, իսկ կանանց պարագայում կինը ներկայացնում է բոլորին, հետևապես նախագահի կին թեկնածուները ստիպված են դիմակայել այդ պահանջին ու այնպես աշխատել, որ մինչ այդ հասարակության ձևավորված վերաբերմունքը կանանց հանդեպ դեպի բացասականը չփոխվի, և այն տղամարդիկ ու կանայք, ովքեր կտրականապես դեմ են կին քաղաքական գործիչներին, չասեն՝ բա որ ասում էինք, տեսա՞ք՝ կին է, բա ի՞նչ էիք ուզում...»

«Կանայք առաջինը պետք է հավատան, որ ունակ են»

«Սոցիոմետր» կենտրոնի տնօրեն, սոցիոլոգ **Ահարոն Ադիբեկյանը** կարծում է, որ Հայաստանում կան այնպիսի պատրաստված, գրագետ, քաղաքականապես հասուն կանայք, որոնք կարող են շատ լուրջ մասնակցություն և ներգրավվածություն ունենալ քաղաքական գործընթացներին: Ի վերջո, նախագահ չեն ծնվում, նախագահ չեն դառնում, այլ նախագահ դարձվում են:

- Մենք նման հարցում անցկացրել ենք, որի համաձայն՝ ամեն երրորդը միայն կքվեարկի կին թեկնածուի օգտին: Իսկ 2/3-ը, քանի որ իրեն ոչ լիարժեք է զգում, ապա գտնում է, որ բոլոր կանայք էլ իր նման ոչ լիարժեք են, ուստի չեն կարող երկիրը ղեկավարել: Այսինքն՝ միայն երրորդ կինն է ամեն հարցում իրեն լիարժեք զգում: Կինը պետք է կարողանա իր շրջապատում մթնոլորտ փոխել, պետք է կարողանա ցույց տալ, որ ինքը որոշում կայացնող է և խորհրդատվության մեծ կարիք չունի:

Կանայք առաջինը պետք է հավատան, որ ունակ են, իսկ մենք բոլորս էլ պետք է վստահ լինենք և ընդունենք, որ կինը կարող է առաջնորդ լինել:

Ժամանակին մենք զարմացանք, երբ Մարգարետ Թեթչերը դարձավ Մեծ Բրիտանիայի վարչապետ: Հետո իմացանք, որ նրան այդ պաշտոնին պատրաստել են դեռ 15 տարեկանից սկսած: Նա լավ կրթություն է ստացել, կուսակցական, խորհրդարանական կարիերա է արել, և իր ազգաբնակչությունը զգացել է, որ Թեթչերը մտածող կին է և կարող է երկրի առջև ծառացած հարցերին ճիշտ լուծումներ տալ:

«Հայ հասարակությունն արդեն պատրաստ է կնոջը երկրի ղեկավարի պաշտոնում տեսնելու...»

«Բոլոր երկրներում էլ կին ղեկավարներին սկզբում լիարժեք չեն ընդունում, չեն վստահում, «խոշորացույցով» են դիտում»,- ասում է քաղաքական հոգեբանության և քաղաքական PR մասնագետ **Գայանե Հարությունյանը:**

«Երբ նայում ես այն կանանց, ովքեր առաջադրվելու ցանկություն ունեին, և համեմատում ես ընտրարշավին մասնակցած նախագահի թեկնածուների հետ, ապա տեսնում ես, որ այդ կանայք ոչնչով չէին զիջում տղամարդ թեկնածուներին: Ավելին՝ ոմանցից նույնիսկ շատ ավելի արժանիքներ և արդյունավետ քաղաքական գործչին բնորոշ սոցիալ-հոգեբանական որակներ ունեին»,- նշում է Գ. Հարությունյանը:

Նրա դիտարկմամբ՝ հայ հասարակությունն արդեն պատրաստ է կնոջը երկրի ղեկավարի պաշտոնում տեսնելու. «Վերջերս անցկացված հետազոտությունները ցույց տվեցին, որ հայ հասարակությունում չկա ծայրահեղ բացասական վերաբերմունք կին նախագահի թեկնածու ունենալու վերաբերյալ»:

Ո՞րն է այս դեպքում ելքը, ի՞նչ անել, որ կանայք նույնպես օգտվեն նախագահի պաշտոնին առաջադրվելու իրենց սահմանադրական իրավունքից: Հարությունյանը կարծում է, որ եթե կուսակցությունները շրջանառության մեջ դնեն «կին լիդեր» գաղափարը և կարողանան հասարակությանը նման կանանց ներկայացնել, ապա շատ հավանական է, որ Հայաստանում կին թեկնածու առաջադրվի և հաղթի: «Մարդիկ տղամարդկանցից հոգնել են, ուստի դա կարող է շատ հետաքրքիր արդյունք տալ: Սկզբի համար կանայք պետք է փորձեն դառնալ որևէ արդեն կայացած կամ նորաստեղծ կուսակցության առաջնորդ: Եվ ոչ թե այսօր զարթնել ու ասել՝ որոշել եմ նախագահ դառնալ»:

Նրա խոսքով՝ շատ հաճախ հատկապես կանանց միջոցով են քաղաքական ուժերը կատարում սև աշխատանքը, ամենադժվարին գործերը:

«Ես նման դեպքերում օգտագործում եմ «քաղաքական թրաֆիքինգ» տերմինը: Հիշենք ՀՀՇ-ի բետեէռները: Խորհրդային զորքի դիմաց հիմնականում կանայք էին առաջին շարքերում կանգնում, քանի որ կնոջ նկատմամբ ուժ գործադրելն անբարոյական և բացասական է ընկալվում: Այսօր էլ սեփական կուսակցության համար դժվարին պահերին ինչպես «փողոցում», այնպես էլ Ազգային ժողովում կանայք հայտնվում են առաջին շարքերում և համարձակ կարծիքներով ու հայտարարություններով պաշտպանում իրենց քաղաքական ուժի շահերը: Կանանց, որպես կանոն, շատ են օգտագործում նախընտրական քարոզարշավների ժամանակ և առավելագույնը՝ ընտրական տեղամասերում»:

Աժ խոսափող

«Այս հարցում միակ ու ամենագլխավոր դերակատարը ժամանակն է...»

Տաճատ Վարդապետյան,
ՀՀԿ խմբակցություն

- Ինչ է նշանակում՝ ես տեսնո՞ւմ եմ կին նախագահ հեռանկարում: Եթե իմ հոգեկերտվածքից բխող պատասխան տամ, ապա ոչ իհարկե, ես պատրաստ չեմ դրան: Գուցե իմ զարգացածությունը առաջադեմ այդ չափանիշներին դեռ չի հասել, բայց ես կարծում եմ, որ Հայաստանը պետք է միայն տղամարդ նախագահ ունենա: Իմ աշխարհընկալումն է այդպիսին, և ես, օրինակ, վերապահումով եմ մոտենում, երբ կինը ավտոմեքենա է վարում, ծխում է... Թույլ տվեք չպատասխանեմ այն հարցին, թե ինչպե՛ս եմ վերաբերվում կին պատգամավորներին, դա էլ թող իմ գաղտնիքը մնա...

Տիգրան Ուրիխանյան,
ԲՀԿ խմբակցություն

- Այո՛, իհարկե հնարավոր է, և ես անձամբ շատ կցանկանայի, որ մենք արդեն իսկ ունենայինք այս ընտրություններին նախագահի կին թեկնածու: Ավելին, այն բոլոր անունները, որ շրջանառվում են, թե առաջադրվելու են գալիք նախագահական ընտրություններում, ուղղակի ողջունելի են:

Աստված ի սկզբանե կնոջը պարգևել է այն ամենը, ինչ անհրաժեշտ է և ինչով կարելի է աչքի ընկնել տարբեր ոլորտներում: Ինքնին կնոջ առկայությունը ստիպում է շատ մեծ ջանքեր գործադրել կուտակելու համար էներգիան, ջանքերը, էմոցիաները և մեկտեղելու բոլոր ուժերը, «որպեսզի մթագնած ուղեղի դեմը կարողանանք առնել, ծնկներում եղած դողը կարողանանք առնել և ինքնատիրապետենք»... Սա հաճոյախոսություն էր (ժպտում է)...

Արտակ Դավթյան,
Աժ կրթության և գիտության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ

- Գիտեք... երբևէ չեմ մտածել այդ հարցի շուրջ՝ արդյոք հեռանկարում տեսնո՞ւմ եմ կնոջը նախագահի պաշտոնում: Բայց հստակ կարող եմ ասել՝ ինչո՞ւ ոչ: Ինձ թվում է՝ այս հարցում միակ ու ամենագլխավոր դերակատարը ժամանակն է, մենք իսկապես ժամանակի խնդիր ունենք: Դա ասում եմ միայն նրա համար, որ նաև մեր հասարակությունում այդ գաղափարն ընկալելի լինի, քանի որ չեմ կարծում, որ այսօրվա պարագայում դա հնարավոր է իրագործելու տեսակետից և հենց այն պատճառով, ինչ նշեցի: Այսօր մենք իսկապես պատրաստ չենք, որ այդ գաղափարն ընդունենք:

Բայց նաև ամեն մեդալ երկու երես ունի. եթե, իհարկե, ի հայտ գա այն կին քաղաքական գործիչը, որը կարող է մարմնավորել բոլոր այն հատկանիշները, որ մեր պատկերացմամբ պետք է նախագահն ունենա, ապա գուցե նաև պայմանավորված ժամանակի գործոնը ավելի շուտ իրականություն դառնա: Թեկուզ նախագահական ընտրություններում նախագահի ուժեղ թեկնածու լինելու առումով էլ, ինչո՞ւ չէ: Բայց, կրկնում եմ՝ կոնկրետ ես այս ամենում անորոշության գործոն տեսնում եմ...

Կանանց օրակարգը

Ի՞նչ օրակարգով են հանդես եկել կանանց ՀԿ-ները նախագահական ընտրություններում

Մեր օրակարգը «Ընտանեկան բռնության մասին» օրենքի ընդունումն է

Ընտրությունների նախաշեմին «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան նախագահի թեկնածուների առջև՝ որպես օրակարգային հարց բարձրաձայնեց «Ընտանեկան բռնության մասին» օրենքի խնդիրը:

«Մենք դիմեցինք նախագահի թեկնածուներին, որպեսզի իմանանք նաև նրանց կարծիքը այս խնդրի շուրջ, և քայլերը, թե ինչպե՛ս կաջակցեն նրանք այս օրենքի ընդունմանը»,- նշում է «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի անդամ «Կանանց ռեսուրսային կենտրոնի» համաղեկավար **Լարա Ահարոնյանը՝** հավելելով, որ այս խնդրով նաև բաց նամակ են պատրաստել՝ ուղղված ՀՀ գործող նախագահին և վարչապետին: Նրա խոսքով՝ այս տարվա սկզբին նախագիծը մերժելու փաստարկները իրենց համար անընդունելի են: «Մեր կարծիքով՝ սա պարզապես քաղաքական կամք չդրսևորելու քայլ էր կառավարության կողմից»,- ասաց նա:

Հիշեցնենք, որ 2010-ին՝ Զարուհի Պետրոսյանի ողբերգական դեպքից հետո ստեղծված կոալիցիայի կազմում ընդգրկված են գենդերային բռնության խնդրով զբաղվող յոթ հասարակական կազմակերպություններ՝ «Կանանց իրավունքների կենտրոնը», «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ն, «Կանանց ռեսուրսային կենտրոնը», «Փինք Արմենիա» կենտրոնը, «Սեռական ճգնաժամային կենտրոնը», «Կանանց աջակցման կենտրոնը», «Զանգակատուն» բարեգործական ՀԿ-ն: Այսօր այս կազմակերպությունները որոշել են միասին պայքարել օրենքի ընդունման համար:

«Երեք խնդիր նախագահի ուշադրությանը»

Կանանց հանրապետական խորհրդի անդամ **Աիդա Թոփուզյանի** դիտարկմամբ՝ գոյություն ունեն երեք օրակարգային հարցեր, որոնք առաջնահերթ լուծման կարիք են զգում և պետք է լիներ երկրի նախագահի ուշադրության կենտրոնում, անկախ նրանից՝ ո՛վ է զբաղեցնում այդ պաշտոնը:

«Առաջին խնդիրը ընտանիքի հարցն է: Թեպետ այսօր կառավարությունը խրախուսում է երեք և ավելի երեխայով ընտանիքի մոդելը, բազմազավակ ընտանիքները որոշակի ֆինանսական աջակցություն են ստանում, սակայն մենք գտնում ենք, որ միայն դա բավարար չէ: Կան հարցեր, որոնք անհրաժեշտ է հատուկ հսկողության տակ առնել, օրինակ՝ բազմազավակ ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմամբ լրջորեն զբաղվել: Օրակարգային պետք է լինի առողջ ընտանիքի գաղափարը, մենք պետք է ոչ թե բուժենք, այլ կանխարգելենք»,- ասաց տիկին Թոփուզյանը:

Երկրորդ կարևորագույն խնդիրը գենդերային հավասարակշռությունն ապահովելու ուղղությամբ կառավարության գործողություններն են, իրենց իսկ կողմից ընդունված գենդերային ռազմավարության իրագործումն է: «Բնակչության կեսից ավելին կանայք են, բարձրագույն կրթություն ունեցող քաղաքացիների մեծամասնությունը՝ նույնպես, կուսակցություններում սև գործը կատարում են կանայք, բայց երբ հարցը վերաբերում է ղեկավար պաշտոններին, կանանց մասին մոռանում են: Այս վիճակը վերջապես պետք է շտկվի»:

Երրորդ առաջնահերթությունը, Կանանց հանրապետական խորհրդի ներկայացմամբ, քաղաքացիական հասարակության ձևավորումն ու կայացումն է.

«Այսօր այնպիսի տպավորություն է, կարծես հասարակությունն ու իշխանությունը առանձնացած լինեն ու ամեն մեկն իր համար է ապրում ու գործում: Մինչդեռ քաղաքացիական հասարակություն-ՁԼՄ-իշխանություն կապի հաստատումը շատ կարևոր է պետության զարգացման տեսանկյունից: Հասարակական սեկտորի լիարժեք կայացման հարցը պետք է լինի օրակարգային…»

«Կնոջը պետք է դիտարկել որպես անվտանգության երաշխավորի»

«Իրավունքի կենտրոն» հիմնադրամի նախագահ, «Կին լիդերներ» ֆորումի անդամ, սոցցապ նախկին փոխնախարար **Թամարա Գևորգյանի** կարծիքով՝ նախագահի թեկնածուների նախընտրական ծրագրերում չկան հստակ մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտային պատկերացնելու, թե առաջիկա հինգ տարիների ընթացքում ի՛նչ միջոցառումներ են իրականացվելու երկրում ծնելիության մակարդակը բարելավելու ուղղությամբ:

«Լուրջ դեմոգրաֆիական խնդրի առջև կանգնած և ծերացող ազգի պարագայում չխոսել, չխորհել և հստակ մեխանիզմներ չառաջարկել առաջին իսկ երեխայի ծնվելու դեպքում, կարծում եմ, մեծ բացթողում է:

Մի կողմից մենք՝ որպես պետություն, հռչակել և ասում ենք, որ կարևոր են մեզ համար այս խնդիրները, վավերացրել ենք կոնվենցիաներ, պարտավորություններ ունենք իրավունքի տեսանկյունից, հայեցակարգ ենք ընդունել, որ պետք է կոնկրետ միջոցներ ձեռնարկվեն, որպեսզի կնոջ դերը բարձրանա հասարակության մեջ: Մյուս կողմից՝ նախագահի թեկնածուների ծրագրերում նման խնդիր չի էլ հիշատակվում: Մինչդեռ եթե խոսում ենք պետության անվտանգության մասին, այստեղ նույնպես կնոջը պետք է դիտարկել որպես անվտանգության երաշխավոր: Եթե մենք կնոջն ուղղված հստակ մոտեցումներ չենք ամրագրում, ապա մեր կանայք չեն մայրանում, չեն ուզում, վախենում են մեկից ավելի երեխա ունենալուց…»

«Ինչպե՞ս եք տեսնում Հայաստանը 10 տարի հետո»

Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան մի հարց էր ուղղել նախագահի թեկնածուներին երիտասարդության անունից:

«Ընդամենը մեկ հարց, որն այնքան էլ չի վերաբերում կանանց հիմնախնդիրներին: Ուզում էինք իմանալ, թե մեր թեկնածուներն ինչպե՛ս են տեսնում Հայաստանը 10 տարի հետո, նրանց տեսլականը: Սա, կարծում եմ, կարևոր է, ու մեր թերացումն է նաև այս 20 տարիների ընթացքում, երբ առաջնորդվում ենք ոչ թե ապագան տեսնելու սկզբունքով, այլ անցյալի հետ համեմատություններով: Մինչդեռ միայն իմանալով հեռանկարը՝ յուրաքանչյուր քաղաքացին կիմանա՝ ինչի՛ համար է աշխատում, ինչո՛ւ է իր երեխային կրթության տալիս և առհասարակ կռիվ տալիս այս օրերի դժվարությունների դեմ»,- ասում է ասոցիացիայի նախագահ **Լիլիթ Ասատրյանը:**

«Կանանց օրակարգը» ներկայացված է. սպասում են արձագանքի

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան ընտրությունների նախաշեմին հրապարակեց կազմակերպության կողմից ձևավորված «Կանանց քաղաքական օրակարգը»: Ասոցիացիայի նախագահ **Զեմմա Հասրաթյանի** ներկայացմամբ՝ այն ազգային անվտանգության, սոցիալական արդարության, երկրի բարօրության հետ կապված առնվազն յոթ հիմնական հարցադրում է պարունակում.

1. Նախագահ ընտրվելու դեպքում ո՞րն է լինելու Ձեր քաղաքականությունը աղքատությունը նվազեցնելու ուղղությամբ:

2. Ի՞նչ քայլեր կձեռնարկեք թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց համար աշխատելու հնարավորություն ստեղծելու ուղղությամբ, թեթև արդյունաբերությունը (մասնավորապես՝ տեքստիլ և սննդի արդյունաբերությունը), ճշգրիտ սարքաշինությունը և ռադիոէլեկտրոնիկան վերականգնելու և զարգացնելու միջոցով:

3. Ո՞րն է լինելու Ձեր քաղաքականությունը ծնելիության խթանման և հայ ընտանիքի արժեքների վերականգնման հարցում: Պատրա՞ստ եք արդյոք խնդիր դնելու ՀՀ կառավարության առջև՝ սահմանել միանվագ պետական նպաստ 300.000 դրամի չափով առաջին և երկրորդ ծնված երեխաների համար, իսկ երրորդ երեխայից սկսած՝ միանվագ նպաստը հասցնել մինչև 1.000.000 դրամի՝ անկախ այն հանգամանքից՝ ընտանիքը հաշվառվա՞ծ է «Ընտանեկան նպաստ» համակարգում, թե՞ ոչ:

4. Ի՞նչ քայլեր կձեռնարկեք, որպեսզի կանխվի հանրակրթության՝ ազգային շահերին չհամապատասխանող վերակառուցումը:

5. Պատրա՞ստ եք արդյոք միջոցներ ձեռնարկել, որպեսզի նախադպրոցական հիմնարկների՝ ապօրինի օտարված և այլ նպատակներով օգտագործվող կառույցները վերադարձվեն նախադպրոցական հիմնարկներին:

6. Ի՞նչ քաղաքականություն եք վարելու՝ ուղղված քաղաքական և հայեցողական պաշտոններում կանանց ներկայացվածության ավելացմանը:

7. Ի՞նչ քաղաքականություն եք վարելու՝ տեղական ինքնակառավարման մարմիններում ժողովրդավարության զարգացման, ինչպես նաև կանանց ներկայացվածության ավելացման ուղղությամբ:

Դիրքորոշում

«Մեր աղջիկները կամավորության սկզբունքով պետք է ծառայեն»

Մենք միայն պոռոտախոսությամբ չենք զբաղվի, որ մեր աղջիկները, տիկնայք փափկասունք… Ես կարծում եմ, որ մեր աղջիկները կամավորության սկզբունքով պետք է գնան մինչև 10 ամիս ծառայելու, որից 6 ամիսը կսովորեն, 4-ը՝ կծառայեն: Ծառայության գնալու են տնից և երեկոյան կրկին տուն են վերադառնալու: Զինծառայության համար աշխատավարձ չեն ստանալու, սակայն նրանց առավելություն է տրվելու բուհում անվճար սովորելու և աշխատանքի ընդունվելու ժամանակ:

Պարույր Հայրիկյան,
ԱԻՄ կուսակցության առաջնորդ

«Ես մերժում եմ կեղծ մաչոյիզմը»

Նախագահի թեկնածուների շարքում պետք է կնոջ անուն էլ լինի: Հինգ տարի անց չեմ հայցելու ձեր ընտրությունը: Հինգ տարի անց շատ եմ ուզում, որ Հայաստանի քաղաքացի հանդիսացող, համալսարանական կրթություն ստացած, խելացի կնոջ կողքին կանգնեմ և զորակցեմ նրա թեկնածությունը: Ես վստահ չեմ, որ դրան պատրաստ է Հայաստանի շարքային կինը, դրա համար դուք՝ կանայք, ևս պետք է պատրաստվեք, պետք է պատրաստվեն նաև տղամարդիկ:

Կնոջ տեղը միայն խոհանոցը չէ, մասնագիտություն, կարիերա ու նաև պետական կառավարում՝ սա էլ է կնոջ տեղը: Այս խոսքերը կարող են իրականություն դառնալ, և կանայք պետք է ներգրավված լինեն հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում: Եթե տղամարդ կա, որ ցանկանում է ինձ հետ բանավիճել, թող գա և ձեր ներկայությամբ բանավիճի: Ես մերժում եմ կեղծ մաչոյիզմը: Կեղծ մաչոները թող գան և բանավեճ անեն մեզ հետ:

Ռաֆֆի Հովհաննիսյան,
«Ժառանգություն» կուսակցության առաջնորդ

«Իմ ամբողջ կյանքի ընթացքում ես լրջորեն հենվել եմ կանանց աշխատանքի վրա»

Հայաստանում այսօր կանայք դեռ ճնշված են և դեռևս ընկալվում են միայն որպես օջախը պահպանողներ: Դա սխալ է, որովհետև կինը կարող է ոչ միայն լավ խորհրդատու, այլև աջակից լինել:

Իմ ամբողջ կյանքի ընթացքում ես լրջորեն հենվել եմ կանանց աշխատանքի վրա, ընդ որում, ոչ միայն կատարողական, այլև ինտելեկտուալ: Սակայն հավելեմ, որ պաշտպանության ոլորտին վերաբերող իմ ծրագրում ես հստակ առաջարկում եմ ստեղծել կանանց կամավոր գնդեր: Ես վստահ եմ, որ նրանք պետք է իրենց ընդունակություններն ու ինտելեկտը ներկայացնեն բանակում: Ես համոզված եմ, որ հայկական բանակը այս պարագայում կշահի:

Հրանտ Բագրատյան,
«Ազատություն» կուսակցության նախագահ

«Կինը չպետք է խոհանոցի բանտարկյալ լինի»

ՀՀ գործող նախագահ Սերժ Սարգսյանը մշտապես կարևորել է կանանց քաղաքական մասնակցությունը ընդլայնելու և քաղաքականության մեջ կանանց ու տղամարդկանց հավասար դերակատարումն ապահովելու հիմնախնդիրները: Պատահական չէ, որ դեռևս խորհրդարանական ընտրություններից առաջ, ՀՀԿ 13-րդ համագումարում ունեցած իր ելույթում նա որպես կուսակցության ղեկավար բավական հանգամանորեն անդրադարձավ ազգային գոյությունը երաշխավորող ընտանիքի գաղափարին՝ նրա հենասյուն համարելով հայ կնոջը, ով, նրա համոզմամբ, սակայն, չպետք է խոհանոցի բանտարկյալ լինի: Նախագահը մատնանշեց ՀՀԿ շարքերում կանանց ներգրավվածության աճը՝ խոստանալով ամեն ինչ անել նրանց մասնակցությունն ավելացնելու, այս միտումը պահպանելու և զարգացնելու ուղղությամբ՝ կարևորելով կանանց նվիրումն ու պահպանողականությունը նոր Հայաստանի կերտման ճանապարհին:

Հերմինե Նաղդալյան,
ՀՀԿ կանանց խորհրդի նախագահ

Սեքսիզմ

Էպոսագեղի «փիեզերական» զավեշտները

…«Խորապես համոզված եմ, որ կինը քաղաքականության մեջ բացարձակապես անելիք չունի: Դա ես չեմ հնարել, դա պարզ, տիեզերական ճշմարտություն է…»

…«Արմենոիդներն ի սկզբանե ունեցել են արիական ծագում, և իգական սկիզբը քաղաքականության մեջ տեղ չունի, քանի որ դա է ապացուցել պատմությունը և հայ էպոսը»:

…«Աշխարհի բոլոր կրոնները մերժում են կնոջ գործունեությունը կրոնական համակարգում: Դա ոչ թե գենդերային խտրականություն է, ուղղակի քանի որ կանայք էմոցիոնալ էակներ են ու շուտ բռնկվող, ուրեմն չեն համապատասխանում կրոնական ու էզոթերիայի ոլորտի չափանիշներին: Կանայք երբ մտնում են կրոնական միստիկայի ոլորտ, որպես կանոն, վերածվում են վհուկների»:

Էպոսագետ Վարդան Սեդրակյանի՝ կանանց մասին զավեշտալի այս մտքերի շարքը իրականում անսպառ է: Ընտրարշավի ընթացքում նա թույլ էր տալիս իրեն ուղղակի վիրավորանքներ քաղաքականության մեջ ներգրավված որոշ կանանց հասցեին, որոնք մենք, իհարկե, չենք պատրաստվում վերարտադրել:

Ի դեպ, լրագրողների այն հարցին՝ արդյոք ինքը մտավախություն չունի՞, որ հայ կանանց մեծ մասն իրենց ձայնը չի տա խտրական վերաբերմունքի համար, Վարդան Սեդրակյանը նշել էր, որ ոչ մի մտավախություն չունի, որովհետև վստահ է, որ հայ կանայք գիտեն իրենց տեղը, դա իրենց ընտանիքն է՝ ամուսնու ու երեխաների կողքին: Կարծում ենք՝ ընտրությունների արդյունքներով ճշգրտվեց նաև Սեդրակյանի տեղը:

Ձայն բազմաց

Ինչպե՞ս են քվեարկել կին ընտրողները

Այս հարցի պատասխանը մեզանում բավականին դժվար է ստանալ, քանի որ ընտրությունների արդյունքները սեռի հատկանիշով տարբերակելու պրակտիկան Հայաստանում դեռևս չի ձևավորվել: Նախընտրական շրջանում կատարված գրեթե բոլոր սոցհարցումները նույնպես չէին տալիս այս հարցի պատասխանը: Այնպես որ, կանանց ու տղամարդկանց ընտրական նախապատվությունների տարբերության մասին պատկերացում ստանալու միակ իրական հնարավորությունը էքզիթ փոլի արդյունքներն էին:

Ինչպես հայտնի է, «Արմնյուզի» նախաձեռնությամբ՝ Հայկական սոցիոլոգիական ասոցիացիան և Baltic Surveys/The Gallup Organization-ը փետրվարի 18-ին իրականացրեցին ելքի հարցում (Exit Poll), որի նպատակն էր բացահայտել և վերլուծել քվեարկության օրն ընտրողների որոշումը: Հարցման մասնակիցների 53 տոկոսը եղել է իգական սեռի ներկայացուցիչներ, իսկ 47 տոկոսը՝ արական:

Ընտրություններից անմիջապես հետո հրապարակված էքզիթ փոլի արդյունքների համաձայն՝

Սերժ Սարգսյանի օգտին էր քվեարկել կանանց 57, իսկ տղամարդկանց 60 տոկոսը, Ռաֆֆի Հովհաննիսյանը ստացել էր կանանց 35, իսկ տղամարդկանց 28 տոկոսի ձայները, Պարույր Հայրիկյանին նախագահի պաշտոնում ցանկանում էր տեսնել կանանց 3, իսկ տղամարդկանց 4 տոկոսը, Հրանտ Բագրատյանին կողմ էր կանանց 2, իսկ տղամարդկանց՝ 3 տոկոսը:

Անդրիաս Ղուկասյանը, Վարդան Սեդրակյանն ու Արման Մելիքյանը հավասարաչափ ձայներ են ստացել երկու սեռի ներկայացուցիչներից՝ 1-ական տոկոս:

Այս տվյալները վկայում են, որ առաջին երկու հորիզոնականները զբաղեցրած թեկնածուների ընտրողների շրջանում առկա գենդերային տարբերությունը որոշիչ ազդեցություն չի ունեցել ընտրությունների արդյունքների վրա, թեպետ Սերժ Սարգսյանի օգտին քվեարկած տղամարդկանց թիվը մոտ 3 տոկոսով ավելի է, քան կանանց, իսկ Ռաֆֆի Հովհաննիսյանին նախապատվություն տված ընտրողների թվի մեջ կանանց ձայները 7 տոկոսով ավելի են, քան տղամարդկանց: Մյուս թեկնածուների օգտին քվեարկած տղամարդկանց ու կանանց միջև տարբերությունը ոչ էական էր:

Նշենք, որ տղամարդկանց ու կանանց ընտրական նախապատվությունների տարբերությունը հատկապես կարևորվում է ԱՄՆ-ի ընտրություններում: Այդ տարբերությունը բավականին էական է և հաստատվում է նաև հասարակական կարծիքի հարցումներով: Հենց այս հողի վրա է ԱՄՆ-ում դեմոկրատների կուսակցությունը կատակով անվանում են մայրիկների կուսակցություն, իսկ հանրապետականը՝ հայրիկների:

Օրինակ՝ 2012-ին տեղի ունեցած նախագահական ընտրություններում գենդերային պառակտումը ընտրողների միջև կազմեց 18 տոկոսային կետ: Տղամարդկանց շրջանում Ռոմնին ուներ առավելություն 9 կետերով, կանանց շրջանում նույնքան առավելություն ուներ Օբաման: Եվ քանի որ ողջ ընտրարշավի ընթացքում թեկնածուների վարկանիշները գրեթե հավասար էին, գենդերային պառակտումը իսկապես որոշիչ դեր էր խաղում:

Ալեքսանդր Ցինկեր. «Կին ընտրողների համար ավելի դյուրին է տղամարդուն ընտրել»

Ընտրական համակարգերի միջազգային փորձագիտական կենտրոնի (ICES) դիտորդական առաքելության ղեկավար, XV գումարման Կնեսետի պատգամավոր Ալեքսանդր Ցինկերը կարծում է, որ կին ընտրողների համար կարևոր է տղամարդ թեկնածուների արտաքինը: Սակայն դրա հետ մեկտեղ, ասում է նա, թեկնածուները պետք է բարձրացնեն կանանց վերաբերող հարցեր, և այդ դեպքում նրանց համար ապահովված է կին ընտրողների կողմից դրական ռեակցիան, որոնք կմտածեն. ահա, ուրեմն, հասկանում է մեր խնդիրները, ես նրա օգտին կքվեարկեմ:

- Ես չեմ զբաղվել այն հարցի ուսումնասիրությամբ, թե ինչպե՛ս են քվեարկել կանայք հայաստանյան ընտրություններում, սակայն կանանց և տղամարդկանց ընտրական նախապատվություններն անշուշտ տարբերվում են: Գաղտնիք չէ, որ շատ երկրներում կանայք քվեարկում են թեկնածուի արտաքինի օգտին: Օրինակ՝ մեզանում՝ Իսրայելում, վերջերս ստեղծվել է նոր կուսակցություն՝ «Եշ ատիդ» («Կլինի ապագա»), և այս կուսակցության առաջնորդը՝ Յաիր Լապիդը, զրոյից ստացավ երկնիշ թվով մանդատներ: Նա բավական երկար Իսրայելի հեռուստատեսությամբ վարում էր ռեյտինգային լրատվական հաղորդում, նաև հրապարակախոս է, բանաստեղծություններ է գրում, և բազմաթիվ երիտասարդ աղջիկներ նրան սովորաբար անվանում են «պուպուշ»: Ոչ բոլորին էր հետաքրքրում նրա ծրագիրը, դուստրս ընտրություններին առաջին անգամ էր մասնակցում, նրան և իր ընկերներին հետաքրքիր էր, թե նա ի՞նչ է գրում «Ֆեյսբուքում», նրանք ասում էին, թե ինչ հաճելի է, նայվող, քվեարկենք նրա օգտին, և դա ապահովեց նրա կուսակցությանը բավականին մեծ հաջողություն՝ ստացած ձայների թվով երրորդ տեղ: Միանգամայն հնարավոր է, որ հաջորդ անգամ նրան չեն ընտրի, որովհետև միայն արտաքինը չի աշխատի, իրականում այն աշխատում է միայն մեկ անգամ: Ամերիկայում այս մեխանիզմը շատ հաճախ կիրառվում է հենց կանանց ընտրազանգվածի, հիմնականում՝ տնային տնտեսուհիների համար, որոնք ընտրում են «իդեալական ամուսին»: Նրանց համար կարևոր է, որ նա սմոկինգով է, գեղեցիկ խոսում է, ընտանեկան ավանդույթներ ունի, և, ինչպես ցույց են տալիս հարցումները, հենց նման թեկնածուներն են ստանում ավելի շատ կանանց ձայներ:

Երկրորդ գործոնը, որը նշանակություն ունի՝ ինչ է խոսում թեկնածուն, բոլորին հետաքրքրում է միայն այն, թե նա ինչ է անելու, սակայն քչերն են հարցնում, թե ինչպե՛ս է անելու…

Նույն օրինաչափությունները նաև, կարծում եմ, ձեզ մոտ՝ Հայաստանում կան… Մենք աշխատել ենք տարբեր երկրներում, օգնել ընտրություններ անցկացնելու և բավական հետաքրքիր հանգամանք ենք նկատել. կանայք չեն քվեարկի հաջողակ կնոջ օգտին, եթե համեմատելով նրան իրենց հետ կարող են ասել՝ ինչո՞վ եմ ես նրանից պակաս: Այս իմաստով կին ընտրողների համար ավելի դյուրին է ընտրել տղամարդուն…

Կարծիքների խաչմերուկ

«Նա գոնե արդարություն կհաստատի…»

Ինչպես հայտնի է, «Ժառանգության» առաջնորդ Ռաֆֆի Հովհաննիսյանը, չճանաչելով ընտրությունների արդյունքները, ծավալեց «Բարև» հանրահավաքային շարժումը: Նրա կողքին՝ Ազատության հրապարակում և՛ հարթակում, և՛ ժողովրդի շարքերում քիչ չեն կանայք: Ինչո՞ւ են նրանք գալիս հրապարակ, ի՞նչ ակնկալիքներով և հույսերով: Այս հարցերի շուրջ ենք զրուցում Ազատության հրապարակի ակտիվիստ կանանց հետ:

30-ամյա **Անահիտ Հովհաննիսյանը** Ազատության հրապարակում երիտասարդների նստացույցի մասնակից է, Համահայկական երիտասարդական ուսանողական շարժման համակարգողն է: Երիտասարդ աղջկա խոսքով՝ այսօր իրեն ոչինչ չի գոհացնում՝ սկսած կրթական համակարգից մինչև մնացած ոլորտները: Նրա համոզմամբ՝ երկիրն այսօր արմատական և համակարգային բարեփոխումների խնդրի առջև է կանգնած:

«Չենք հանդուրժում գործող իշխանությանը, չենք թողնելու, որ երդմնակալությունը տեղի ունենա, նստացույցը հետապնդում է այդ նպատակը՝ ինքնաբացարկ ենք պահանջում: Կոնկրետ ես ինքս իմ ձայնը տվել եմ Ռաֆֆի Հովհաննիսյանին, ես վստահ եմ, որ հաղթանակը նրանն է եղել, և հիմա պայքարում եմ իմ քվեն պահպանելու և ընտրությունների իրական արդյունքները վավեր ճանաչելու համար»,- ասում է Անահիտ Հովհաննիսյանը:

54-ամյա տիկինը, ով չցանկացավ հրապարակել իր անունը, ասաց, որ գալիս է Ազատության հրապարակ, որ «մեր երեխաները նորմալ ապագա ունենան, որովհետև այս իշխանություններից մեր երեխաների համար նորմալ ապագա սպասել հնարավոր չէ»: Ռաֆֆի Հովհաննիսյանից տիկինն ակնկալում է, որ նա «գոնե արդարություն կհաստատի, և ժողովուրդն արհամարհված չի լինի»:

51-ամյա գործազուրկ **Մարիետա Մանուկյանն** էլ ասում է, որ այսօր պետությունը որևէ ուշադրություն չի դարձնում հաշմանդամություն ունեցող երեխաներին: Նա ակնկալում է, որ գոնե սոցիալական ոլորտում և հատկապես հավասար հնարավորությունների առումով Ռաֆֆի Հովհաննիսյանը փոփոխություններ կապահովի:

«Ես չեմ ուզենա գնալ և հավաքարարություն անելով ապրել: Հիմա դրա համար էլ են անգլերենի իմացություն պահանջում: Ես ուզում եմ, որ մենք էլ հարգված լինենք մեր

երկրում, այնպես, ինչպես այլ պետությունների քաղաքացիներն են ապրում»,- նշում է նա:

Մենք զրուցեցինք նաև այն կանանց հետ, ովքեր չեն մասնակցում հանրահավաքներին:

29-ամյա **Լիանա Հարությունյանն** ասում է, որ յուրաքանչյուր մարդ ինքն իր աշխատանքով պետք է կերտի իր ապագան: «Չեմ կարծում, որ ստեղծված պայմաններում միտինգների միջոցով հնարավոր է ինչ-որ բան փոխել: Դա որևէ արդյունք չի տա: Ինձ թվում է՝ ավելի ճիշտ է աշխատել, սեփական ջանքերով փորձել ինչ-որ բան փոխել: Ես գերադասում եմ միտինգների չգնալ, փորձել փոխել կյանքս իմ աշխատանքով, համենայն դեպս, անել այն ամենը, ինչը որ համարում եմ՝ կարող եմ»:

37-ամյա **Քրիստինան** չի մասնակցում որևէ շարժման, որովհետև հիասթափվել է: «Ես արդեն չեմ հավատում որևէ մեկին,- ասում է նա՝ մտավախություն հայտնելով,- հանկարծ այնպես չլինի, որ քաղաքական այս խաղերը բերեն հինգ տարի առաջ տեղի ունեցածի կրկնությանը…»

Հարց է առաջանում՝ ո՞րն է ելքը: «Կարծում եմ՝ միակ ելքն այս իրավիճակից երկխոսությունն է, որովհետև 800 հազարից ավելի մարդիկ, ովքեր ընտրել են հանրապետության գործող նախագահին, և այն 500 հազար մարդիկ, ովքեր ընտրել են Ռաֆֆի Հովհաննիսյանին, մեր հասարակությունն են…»,- մեզ հետ զրույցում ասաց ՀՅԿ պատգամավոր **Մարգարիտ Եսայանը:**

Ամբիոն

«Հարթակում եմ, որովհետև պահանջատեր քաղաքացի եմ»

Հարթակում եմ, որովհետև ասելիք ունեմ, որովհետև մայր եմ, ով ուզում է, որ իր երեխաները լավ ապագա ունենան հենց իրենց հայրենիքում, այլ ոչ թե օտար ափերում: Հարթակում եմ նաև, որ իմ օրինակով պայքարին միանան բոլոր մայրերը և հասկանան, որ երեխային միայն կերակրելն ու դաստիարակելը քիչ է, կան գործոններ, որոնք կզրոյացնեն քո բոլոր ջանքերը՝ երեխայիդ համար լավ ապագա ստեղծելու, և այդ գործոններից մեկը միջավայրն է, որին նա առնչվում է ընտանիքից դուրս:

Իզաբելլա Աբգարյան,
բլոգեր

«Չմոռանանք, որ մենք ենք մեր երկրի վաղվա ղեկավարները»

Ազգային զարթոնքի, շարժման այս օրերին հայ կինը չի կարող անտարբեր մնալ: Այս օրերին մեզ ոչ թե ծաղիկներ էին պետք, այլ՝ արդարություն, ոչ թե սիրուն խոսքեր, այլ՝ համերաշխություն: Մենք՝ կանայք, որպես հասարակության լիարժեք անդամ պարտավոր ենք վճռական լինել մեր ապագա սերունդների համար, լինել ոչ միայն կանանց իրավունքների, այլև ժողովրդի իրավունքների պաշտպան…

Մարիա Թիթիզյան,
Սոցինտերնի փոխնախագահ

«Այս շարժման մեջ կա սեր դեպի Հայաստանը»

Այս շարժման մեջ կան նաև պատասխանատվություն ու հանձնառություն հանուն Հայաստանի: Ոգևորում է նաև, երբ տեսնում եմ այն դրական էներգիան, որ տիրում է հրապարակում: Չկա ջարդելու-փշրելու տրամադրություն: Ես էլ եմ համաձայն Ռաֆֆիի այն դիտարկումներին, որ պետք է գնահատել Սերժ Սարգսյանի և ՀՀԿ-ի՝ մեր պետականության մեջ ունեցած ներդրումները, սևացնելու կողմնակից չեմ, բայց նրանք ձախողել են իշխանությունը, երկրի առաջընթացը և պետք է սիրուն հեռանան: Քաղաքականությունը նաև գեղեցիկ կամ ժամանակին հեռանալու արվեստն է:

Լիլիթ Գալստյան,
ՀՅԴ անդամ

«Վստահ եմ՝ նրա քաղաքակիրթ քայլերը կզարմացնեն բոլորին»

Վստահեցնում եմ և համոզված եմ, որ 1996-ի նման Ազգային Ժողովի դարպասները մագլցողներ չեն լինի, ինչպես նաև համոզված եմ, որ 2008-ի ճանապարհներով պետք չէ գնալ: Ռաֆֆի Հովհաննիսյանն իր բարոյական, բարի քարոզչությամբ հաղթանակեց և մեր քաղաքացիները հավաքվեցին հենց այդ բարության շուրջը՝ մերժելով ատելությունը: Վստահ եմ, որ նրա հետագա քաղաքակիրթ քայլերը կզարմացնեն բոլորին:

Անահիտ Բաշխյան,
«Ժառանգության» անդամ

Համարի վրա աշխատել են՝

Հասմիկ Հարությունյանը, Մարիաննա Ղահրամանյանը, Լիա Խոջոյանը, Լիլիթ Քոչինյանը, Արև Հակոբյանը

Թողարկումը հրատարակվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի եւ Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան համատեղ աջակցությամբ

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
էլ. հասցե՝ promediagender_arm@yahoo.com